ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԽՈՍՔԸ ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ ԱԶԳԱՅԻՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԹԱՏՐՈՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(19 ապրիլ, 1999 թ.)

Մեծազնիվ հոբելյար.

Հարգարժան ներկաներ.

Հանուն Վեհափառ Հայրապետի. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության և հավատացյալների հաճելի պարտականությունն ունենք ջերմորեն ողջունելու հոբելյանական այս հանդիսության բոլոր մասնակիցներին և օրհնություն ու բարեմաղթանքներ բերելու սիրելի հոբելյարին՝ հայ մեծանուն և վաստակաբեռն բանաստեղծուհի տիկին Սիլվա Կապուտիկյանին:

Դժվար է ճանաչում ձեռք բերելը. առավել դժվար՝ գնահատված ու սիրված լինելը: Համընդհանուր ճանաչումն ու սերը անխուսափելիորեն գալիս են. երբ ձեռաց գործերում. հոգու և մտքի արարումներում կիզակիտվում են հայրենի երկրի և ժողովրդի ձեռքբերումներն ու կորուստները. սլացքներն ու սպասումները. բացահայտվում է մարդն իր ներաշխարհով: Այսպիսին է Սիլվա Կապուտիկյանի ստեղծագործական կյանքի պատկերագիրը՝ նրա գրական. հրապարակախոսական. թարգմանական երկարամյա և բեղուն ժառանգությունը. որն առանձնանում է պարտքի և պատասխանատվության ընդգծված ապրումով. և որում տեսանելի է Հայրենիքի ու աշխարհասփյուռ հայության կշռույթներով ապրող պարտավորված անհատը:

Սևակ. Շիրազ. Դավթյան. Էմին. Մաթևոսյան և թանկագին ուրիշ անուններ... Եվ այս շարքում՝ Սիլվա Կապուտիկյան. գրչի ու մտքի մշակներ, ովքեր իրենց ստեղծագործական երկունքներում տասնամյակներ շարունակ փայփայում էին հայոց անկախության Մանկանը. կորուսյալ պետականության վերածնման նվիրական երազը: Արդարև. երանյալ եք Դուք. մեծարգո հոբելյար. քանզի տեսաք հայոց անկախությունը. և երիցս երանյալ. որ ինքնիշխան մեր պետությունն ու ժողովուրդն այսօր մեծարում են Ձեզ՝ վաստակյալ Ձեր կյանքին ընծայելով հաղթության դափնիներ:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին. նրա արժանընտիր գահակալ Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը. բարձր գնահատելով հավատավոր իր դստեր՝ Սիլվա Կապուտիկյանի վաստակը և հայարյուն ոգին. որ աստվածամերժ ժամանակներում առաջնորդում էր նրան դեպի Մայր Աթոռ

Սուրբ Էջմիածին. պարգևատրել է Ամենայն Հայոց Հայրապետության քարոզ՝ «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանով:

Մեծազնիվ հոբելյար. ուրախ ենք հայտնելու. որ շքանշանը և Հայրապետական օրհնագիրը Ձեզ կհանձնեն Մայր Աթոռում. հատուկ հանդիսավորությամբ:

Կրկին մեր շնորհավորանքները բերելով Ձեզ. աղոթքով առ Բարին Աստված. մաղթում ենք ստեղծագործական նորանոր ներշնչանքներ և լիազգաց երջանկության բազում առիթներ: Թող Ձեր գրչով փառաբանված աստվածապարգև մեր հոդում իրական դառնան խոսքերն ու երազները մեր ժողովրդի: Թող ամենուր «Խոսք իմ որդուն» պատգամը հարատև արձագանքի հայ մանուկների մաքուր ու վճիտ հոգիներում՝ սրբաբանվելով նրանց շուրթերին:

Արնշատ կյանք Ձեզ. նոր հոբելյաններ:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ ՍՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ